ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի «Լեոյի անվան մսուր - մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության հոգեբանի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցույթ հայտարարելու մասին

| N | **Թափուր պաշտոնի անվանումը** | **Հավակնորդին ներկայացվող պահանջները (չափանիշները)** | **Մրցույթին մասնակցելու իրավունք չունի այն անձը, ով՝** | **Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերը** |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1 | Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի « Լեոյի անվան մսուր-մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության հոգեբան (0,5 դրույք) | 1)**Որակավորման պահանջները**<br>Նախադպրոցական ուսումնական հաստատության հոգեբանը պետք է ունենա՝ բարձրագույն (բակալավր, դիպլոմավորված մասնագետ, մագիստրոս) մասնագիտական կրթություն՝ համապատասխան որակավորմամբ:<br>**2) Ընդհանրական պահանջները**<br>Նախադպրոցական ուսումնական հաստատության հոգեբանի պաշտոն զբաղեցնողը պետք է իմանա ստորև նշված նորմատիվ իրավական ակտերի այն դրույթները, որոնք վերաբերում են նախադպրոցական կրթության բնագավառին, կանոնակարգում են պաշտոնի նկարագրով ամրագրված լիազորությունները.<br>ա/ «Կրթության մասին» ՀՀ օրենքը, «Նախադպրոցական կրթության մասին» օրենքը, «Երեխայի իրավունքների մասին», «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» ՀՀ օրենքները.<br>բ/ նախադպրոցական կրթական չափորոշիչները և իր պաշտոնային պարտականություններին վերաբերող նորմատիվ ակտերը, իրավական այլ փաստաթղթեր. | **Մրցույթին մասնակցելու իրավունք չունի այն անձը,** որը՝<br>1) դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ,<br>2)դատական կարգով զրկվել է մասնագիտական գործունեությամբ զբաղվելու իրավունքից,<br>3)տառապում է ՀՀ կառավարության կողմից հաստատված այնպիսի հիվանդությամբ, որը կարող է խոչընդոտել մանկավարժական գործունեության իրականացմանը,<br>4)դատապարտվել է հանցագործության համար և դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ, բացառությամբ այն դեպքերի, երբ դատապարտվել է ոչ դիտավորյալ հանցագործություն կատարելու համար: | 1)դիմում (Ձև1)<br>2)անձը հաստատող փաստաթուղթ.<br>3)կրթության մասին փաստաթուղթ<br>4)աշխատանքային ստաժի մասին տեղեկանք/առկայության դեպքում/<br>5)ինքնակենսագրություն (ձև4)<br>6) մեկ լուսանկար՝ 3×4չափի<br>7)այլ պետությունների քաղաքացիները՝Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հաստատող փաստաթուղթ,<br>8)Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ կամ զինվորական կցագրման վկայական,<br>9)հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | գ/ ուսուցման և դաստիարակության մասին նորմատիվ փաստաթղթերը, օրենսդրության հիմունքները, ընդհանուր և մանկավարժական հոգեբանություն, ընդհանուր մանկավարժություն, անձի և դիֆերենցիալ հոգեբանություն, տարիքային և մանկան հոգեբանություն, սոցիալական հոգեբանություն, բժշկական հոգեբանություն (մանկան նյարդահոգեբանություն, պաթոհոգեբանություն, պսիխոմատիկա), արատաբանություն, հոգեթերապիա, աշխատանքի հոգեբանություն, հոգեախտորոշման, հոգեպրոֆիլակտիկայի հիմունքները, ակտիվ ուսուցման, շփման, սոցիալ-հոգեբանական, երեխայի բնական և ոչ բնական զարգացման կանխորոշման մեթոդները: | | հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում): |
| | | Նախադպրոցական ուսումնական հաստատության հոգեբանի թափուր պաշտոնի մրցույթի մասնակիցների՝ 3-րդ սյունակի 1-ին կետով նախատեսված պահանջները հավասարապես բավարարելու դեպքում մրցութային հանձնաժողովի կողմից մասնակցին հաղթող ճանաչելու մասին որոշում կայացնելիս կարող են հաշվի առնվել նաև 2-րդ կետով նշված լրացուցիչ պահանջները: | | **Մրցույթին մասնակցելու համար դիմած քաղաքացին փաստաթղթերը ներկայացնում է անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող այլ փաստաթղթով:** |
| 2 | **Մրցույթն անցկացնելու վայրը, օրը, ժամը** | **Դիմումների և փաստաթղթերի ընդունումը** | | **Դիմումների և փաստաթղթերի ներկայացման ժամկետները** |
| | **Վայրը՝ ՀՀ ՇՄ Ախուրյան համայնք , գյուղ** Ախուրյան Հ. Դալլթյ ան 26 **Օրը՝2024 թվականի դեկտեմբերի 27-ին ժամը՝11:30** | Փաստաթղթերը ներկայացնելու, լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար դիմել **ՀՀՇՄ Ախուրյան համայնքի «Լեոյի անվան մսուր - մանկապարտեզ» ՀՈԱԿ** ՀՀ ՇՄ Ախուրյան համայնք , գյուղ Ախուրյան Հ. Դալլթյ ան 26 **Հեռ.098758509** | | **2024 թվականի նոյեմբերի 25-ից մինչև դեկտեմբերի 20 -ը ներառյալ** |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | **Հարցաշարերը ` Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի «25» մարտի 2022 թվականի N471-Ա/2 հրաման:** | | |
| | | **Փաստաթղթերի ընդունումը` ամեն օր, ժամը 09:00-17:00, բացի շաբաթ և կիրակի** | | |